ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ՝

ԲԱԶՄԱՎԱՍՏԱՆ ԳԻՏՆԱԿԱՆԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆ
(Խ. Հ. Բարսեղյանի ծննդյան 70 ամյակի առթիվ)

Լուսցավ վաստակաշատ պատմաբան, ՀՍՍՀ ԳԱ նրատարակչության դիրեկտոր, ազգային պրոցեսների ուսումնասիրման միջգերատեսչական գիտական խորհրդի նախագահ, ՀՍՍՀ կուլտուրայի վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խիկար Հակոբի Բարսեղյանի ծննդյան 70 և գիտամանկավարժական գործունեության 50 ամյակը: Հիրավի, բե-

դուն ու նարուստ է Խ. Բարսեղյանի անցած կյանքի ուղին, ծանրակշիռ է նրա պատմագիտական վաստակը, բազմակողմանի՝ նրա կուսակցական, գիտական-կազմակերպչական, հասարակական-քաղաքական և ժուռնալիստական գործունեությունը:

Պրոֆեսոր Խ. Բարսեղյանը Հայաստանի կոմկուսի, հայ ժողովրդի նոր և նորագույն շրջանի պատմության նանաչված մասնագետներից է: Նա մեծ հերդրում ունի Անդրկովկասում մարքսիզմի տարածման, կոմունիստական կազմակերպությունների, հեղափոխական շարժումների, բոլշևիկյան մամուլի և սոցիալիստական շինարարության պատմության մշակման գործում:

Խ. Բարսեղյանը ծնվել է 1918 թ. հունիսի 7-ին, Գորիսի շրջանի Շինուհայր գյուղում: 1937—1941 թթ. սովորել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում: Այստեղ էլ, ուսման տարիներին ընդունվել է կուսակցության շարքերը:

1941—1944 թթ. զոնվել է սովետական բանակի շարքերում, 89-րդ Թամանյան հայկական հրաձգային դիվիզիայի կազմում մարտնչել Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատ-

ներում: Զորացրվելուց հետո Խ. Բարսեղյանը խմբագրել է Լենինականի քաղաքային և օկրուգային «Բանվոր» թերթը, եղել է ՀԿԿ Կենտկոմի մամուլի, հրատարակչությունների և ռադիոյի սեկտորի վարիչ, «Սովետական Հայաստան» թերթի խմբագրի տեղակալ, ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր Մլի հայկական մասնաճյուղի և ապա՝ «Հայաստան» հրատարակչության դիրեկտոր: Ավելի քան 25 տարի է, ինչ Խ. Բարսեղյանն աշխատում է Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայում. նախ աշխատել է պատմության ինստիտուտում, ապա 1970—1984 թթ. եղել է հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնի դիրեկտոր: 1984 թ. հուլիսից նա ԴԱ հրատարակչության դիրեկտորն է:

Ստեղծագործական գործունեության ավելի քան հինգ տասնամյակում Խ. Բարսեղյանը հրատարակել է տասնյակ արժեքավոր մենագրություններ, գրքույկներ, հարյուրավոր գիտական հոդվածներ: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակում կարևոր տեղ է գրավում Հայաստանում մարքսիզմ-լենինիզմի տարածման պատմության ուսումնասիրությունը: Այդ պրոբլեմին են նվիրված «Մարքսիզմի տարածումը Հայաստանում» (երկհատոր), «Հայաստանում մարքսիզմ-լենինիզմի տարածման պատմություն» (ռուսերեն, երկու գրքով) և այլ աշխատություններ, որոնցում հեղինակը փաստական հարուստ նյութերի հիման վրա լուսաբանում է հայ իրականության մեջ մարքսիզմի տարածման սոցիալ-տնտեսական և գաղափարական նախադրյալները՝ հայ պրոլետարիատի առաջացումը, բանվորական շարժման առաջին քայլերը, մարքսիզմի զարգացման լենինյան փուլի սկզբնաշրջանի պրոբլեմները՝ մարքսիստական խմբակների, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների գործունեությունը, մարքսիստական գրականության հրատարակման և Հայաստանում բոլշևիկյան կազմակերպությունների ձևավորման պատմությունը: Խ. Բարսեղյանը Հայաստանում մարքսիզմի տարածումը ուսումնասիրում է լայն ընդգրկումով. մանրամասն տալիս է մարքսիստական գրականության հայերեն թարգմանությունների և տարածման պատմությունը, բացահայտում և լուսաբանում է հայ հասարակական մտքի մարքս-լենինյան վտլը, ուտոպիական ու մանրբուրժուական սոցիալիզմի, բուրժուական գաղափարախոսության դեմ հայ լենինյանների մղած պայքարը, հրանց կողմից մարքսիստական տեսության հարցերի մշակման, բանվորական շարժման հետ սոցիալիզմի միացման ընթացքը, հեղափոխական շարժումների ծավալման դինամիկան և այլ հարցեր:

Խ. Բարսեղյանի ուսումնասիրությունների մյուս ուղղությունը Հայաստանի կոմունիստական կուսակցության առաջացման և կազմակերպման ձևավորման պատմությունն է: Դրան են նվիրված «Վ. Ի. Լենինը և Անդրկովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների ձևավորումը», «Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմավորումը» աշխատությունները և այլն:

Նշանակալի արժեք ունեն Խ. Բարսեղյանի «Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմություն» (հայերեն և ռուսերեն), «Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա», «Հեղափոխական կոչեր և թռուցիկներ», «Վ. Ի. Լենինը և «Գրավդան» և այլ աշխատություններ: Մեզանում առաջինը հիմք դնելով բոլշևիկյան հայ պարբերական մամուլի սիստեմատիկ ու գիտական հետազոտությանը, Խ. Բարսեղյանը ստեղծեց բոլշևիկյան հայ պարբերական մամուլի ամբողջական գիտական պատմությունը՝ նրա առաջացումից մինչև Հայաստանում սովետական իշխանության հաստատումը: Այդ կարևոր պրոբլեմին էին նվիրված նրա թեկնածուական և դոկտորական դիսերտացիաները:

Պրոֆ. Բարսեղյանը ստեղծել է մի շարք աշխատություններ, որոնք մտել են հայկական լենինագիտության մեջ: Այդ մատենաշարից են «Վ. Ի. Լենինը կոմունիստական կուսակցության մեծ կազմակերպիչը և առաջնորդն է», «Վ. Ի. Լենինը և Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների կազմավորումը», «Վ. Ի. Լենինի երկերի հայերեն հրատարակությունների պատմություն», «Լենինի հետ», «Հայկական լենինագիտում» և այլն: Երևանում և Մոսկվայում հրատարակված այդ աշխատություններում նա բացահայտում է Վ. Ի. Լենինի դերը Հայաստանում բոլշևիկյան կազմակերպությունների ստեղծման և ամրապնդման գործում, առաջնորդի կապերը հայ հեղափոխական գործիչների հետ, նրա ավանդը հայ ժողովրդի սոցիալական և ազգային ազատագրության գործում:

Շուրջ քառասուն տարի Խ. Բարսեղյանը լուսաբանում է Անդրկովկասի պրոֆեսիոնալ հեղափոխականների՝ հավատարիմ լենինականների կյանքն ու գործունեությունը: Նա շանումյանագիտության հիմնադիրներից է: Մոսկվայում, Երևանում և Կիևում հրատարակել է Ստեփան Շահումյանի կյանքին ու հեղափոխական գործունեությանը նվիրված մի շարք ուշագրավ աշխատություններ, որոնցից հատկապես հարկ է առանձնացնել «Ստեփան Շահումյան. կյանքի և գործունեության վավերագրական տարեգրություն» աշխատությունը: Գրքում արխիվային վավերագրերի, պարբերական մամուլի, հրատարակված գրքերի, ժամանակակիցների հուշագրությունների, մեծ լենինյանի գրական-տեսական ժառանգության և այլ աղբյուրների հիման

վրա տրված է Սա. Շահումյանի կյանքի ու գործունեության փաստալից ու ճշգրիտ տարեգրությունը: Խ. Բարսեղյանը մեծ վաստակ ունի Շահումյանի գրական ժառանգության ուսումնասիրման և պրոպագանդման, հայերեն և ռուսերեն լեզուներով հրատարակված նրա երկերի խմբագրման գործում: Շահումյանագիտությանը մատուցած ծառայությունների համար Խ. Բարսեղյանը արժանացել է ՀՍՍՀ ԳԱ Ստեփան Շահումյանի անվան մրցանակի դափնեկիր կոչման:

Խ. Բարսեղյանը ուրիշ շատ հիմնարար աշխատությունների, այդ թվում՝ «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակի, «Հայաստանի կոմկուսի պատմության ուրվագծերի» համահեղինակ է: Առհասարակ, նրա աշխատություններին բնորոշ են ազգությունագիտական հարուստ հենքը, նյութի ընդգրկման լայնությունը, արծարծված հարցերի խորությունը և բազմակողմանիությունը: Դրանք ունեն գիտական և հանրաշողական լուրջ արժեք և հաղթական որոշակի հնչեղություն: Այդ են վկայում նրա աշխատությունների վերաբերյալ շարս տասնյակից անցնող այն գրախոսականները, որոնք տպագրվել են մեր երկրի տարբեր հաղթանակների պատմակուսակցական և գիտական մամուլում:

Խ. Բարսեղյանը նաև գեղարվեստական-վավերագրական մի շարք գրքերի հեղինակ է: Արժեքավոր են նրա «Կրակների միջով», «Այսպես ապրեցին», «Հանդիպումներ Ավետիք Իսահակյանի հետ», «Շիրազ» և այլ էսսեները: Վերջերս լույս տեսավ նրա «Կարմիր պանրեռնից» աշխատությունը, որը հեղափոխության նշանավոր գործիչներին նվիրված հեղինակի հուշագրության առաջին գիրքն է: Պատմավավերագրական ժանրի այս աշխատությունն ընթերցող լայն շրջաններին է ներկայացնում ռուսաստանյան երեք հեղափոխությունների բովում կռվված, սովետական իշխանության հաստատման ու ամրապնդման, սոցիալիզմի համար մղված պայքարի լենինյան գվարդիայի տասներեք ներկայացուցիչների հերոսական կյանքը: Սա, իրոք, հիշատակի յուրօրինակ պսակ է հեղափոխությանը և նրա իդեալների հաղթանակի գործին իրենց կյանքը անմնացորդ նվիրաբերած մարտիկներին:

Բազմակողմանի և լայն են Խ. Բարսեղյանի, որպես ժուռնալիստ-հրապարակախոսի, հետաքրքրության շրջանակները: Սկսած 1932 թ. նա կապված է հանրապետական գրեթե բոլոր պարբերականների հետ, մշտապես հանդես է գալիս հանրապետության աշխատավորներին հուզող ամենատարբեր հարցերի շուրջ: Նրան հանաչում են ոչ միայն որպես պրոֆեսիոնալ ժուռնալիստի, այլև գրքագետի:

Խ. Բարսեղյանն արժանի հարգանք ու հեղինակություն է վայելում ուսանողության շրջանում: 1947 թ. ի վեր նա հանրապետության բուհերում դասավանդել է ՍՄԿԿ պատմություն, սովետական պարբերական մամուլի տեսություն ու պրակտիկա, բոլշևիկյան մամուլի պատմություն, իսկ այժմ դասավանդում է հասարակական-քաղաքական գրականության մատենագիտության հիմունքներ առարկան:

Խ. Բարսեղյանը գիտական և հրատարակչական գործի հմուտ կազմակերպիչ է: Նրա շանքերով հանրապետությունում ստեղծվել է նոր ուղղություն՝ հասարակական գիտությունների և հայագիտության գիտական ինֆորմացիա: Նա ճանիցս մասնակցություն է ունեցել համամիութենական և միջազգային գիտաժողովների՝ պատմության, գիտական կոմունիզմի, գրքագիտության գծով հանդես է եկել զեկուցումներով: Գիտելիքների տարածման և աշխատավորների կոմունիստական դաստիարակության գործին մատուցած ծառայությունների համար նա պարգևատրվել է «Գիտելիք» ընկերության բարձրագույն պարգևով՝ Վավիլովի անվան մեդալով:

Խ. Բարսեղյանը հանրապետության գաղափարական ճակատի հանաչված աշխատողներից է: Նա բազմիցս ընտրվել է կուսակցության Երևանի քաղաքային և օկրուգային, Մյասնիկյանի շրջանային և Լենինականի քաղաքային կոմիտեների անդամ, ժողովրդական դեպուտատների քաղաքային և շրջանային սովետների դեպուտատ: Նա գործուն մասնակցություն է բերում հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին. ՀՍՍՀ «Գիտելիք» ընկերության վարչության նախագահի տեղակալ է, այդ ընկերության հրատարակչական խորհրդի նախագահը, ՀՍՍՀ ԳԱ պատմության, արևելագիտության ինստիտուտների, ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր Մարքսի հայկական մասնաճյուղի, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր արխիվային գլխավոր վարչության, Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի և այլ հաստատությունների գիտական խորհուրդների, «Հայկական սովետական հանրագիտարանի» հյուղային խորհրդի, 89-րդ հայկական Թամանյան դիվիզիայի պատերազմի վետերանների խորհրդի անդամ է:

Հայրենիքի գինվորի և կոմունիստ գիտնականի ծառայությունները բարձր են գնահատվել: Նա պարգևատրվել է Հայրենական պատերազմի երկրորդ աստիճանի, Կարմիր աստղի, «Ժողովուրդների բարեկամության» շքանշաններով, տասնչորս մեդալներով, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրերով:

Վաստակաշատ գիտնականն այսօր էլ մեծ եռանդով առլեցուն շարունակում է իր արգասավոր գիտական և գրահրատարակչական գործունեությունը, ընթերցողի սեփականությունը դարձնում ուշագրավ նոր գործեր: Արդ, ցանկանք հարգարժան պրոֆեսորին և մեր գործընկերոջը բաջառողջություն ու ստեղծագործական նորանոր հաջողություններ:

Հ. Ռ. ՍԻՄՈՆՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ

Վ. Խ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ՄԵՆԱՐԳՈ ՀՈԲԵԼՅԱՐ

Հայաստանի գիտական և ընթերցող լայն հասարակայնության հետ միասին ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի խմբագրական կոլեգիան ի սրտե շնորհավորում է Ձեզ՝ մեր ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամին, Ձեր ծննդյան 70 ամյակի առթիվ: Ձեզ մաղթում ենք բաջառողջություն և երկար տարիների կյանք:

ՀՍՍՀ ԳԱ «ԼՐԱԲԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ»
ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ